

ԲՈՒՆԻԱԹ ՍԵՐԱՍՏԱՑՈՒ «ԳԻՐՔ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ
ՏՈՒՄԱՐԻ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Դ. Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Պատմական Փոքր Հայքի մայրաքաղաք Սերաստիայում ծնվել, ապրել ու ստեղծագործել են հայ մշակույթի գրեթե բոլոր բնագավառների կարկառուն ներկայացուցիչներ՝ գրիչներ, մատենագիրներ, մանրանկարիչներ և այլն: Դրանց շարքում ուշագրավ տեղ են գրավում բժիշկ-բնագետներ Հովասափ, Ասար և Բունիաթ Սեբաստացիները, որոնք արժեքավոր աշխատություններով հարստացրել են հայ ազգային մշակույթի գանձարանը: XVI—XVII դդ. ապրած այս գործիչների մասին հայագիտական պարբերականներում և բժշկա-պատմական գրականության մեջ կան առանձին ցաք ու ցրիվ տեղեկություններ միայն, որոնք, սակայն, դեռևս ի մի չեն բերվել: Մեր նպատակն է ներկայացնել նրանցից մեկի՝ Բունիաթ Սեբաստացու «Գիրք բժշկութեան տումարի» հիմնական աշխատությունը, անշուշտ, հաշվի առնելով նաև նրա մյուս գրվածքները:

Բունիաթ Սեբաստացու մասին հայ բանասիրության մեջ մեզ ծանոթ առաջին հիշատակությունը «Բազմավեպի» 1849 թ. համարում է, ուր զետեղված է «Երատ վարդապետաց, որ ասացեալ են աշակերտաց ուսանողաց»¹ բանաստեղծությունը. խրատը հիմնականում ուղղված է թերուս բժիշկներին, Այն դրված է գրաբար, բացառությամբ առաջին և վերջին քառատողերի, որոնք ժամանակի խոսակցական լեզվով են: Բժիշկը պետք է խելոք լինի,— դրում է Բունիաթ Սեբաստացին,— հարեցող և ազահ չլինի, շատ լավ իմանա բոլոր դեղերի զորությունը. հիվանդի իսկական ցավը հասկանալու դեպքում միայն դեղ նշանակի և այլն: Նա գտնում է, որ ճիշտ բուժման համար բժիշկը պետք է հաշվի առնի հիվանդի խառնվածքը, հիվանդությունն առաջացնող պատճառները և նշանակվող դեղի զորությունը:

Բունիաթ Սեբաստացու մասին հաջորդ հիշատակությունը գտնում ենք Ա. Սուբրյանի «Պատմություն հայ բժշկության» անավարտ գործի մեջ: Բարձր գնահատելով նախորդ շրջանի հայ նշանավոր բժիշկների (Մխիթար Հերացի, Ամիրդովլաթ, Ասար և այլն) գրվածքները, Ա. Սուբրյանը միաժամանակ հայտնում է, որ «կան ուրիշներն ալ՝ զորս միայն հանուանե գիտենք, որով չենք կրնար անսխալ գաղափար մը շինել ասոնց գրութեանց ոճին վրա, այս դասակարգե է Պունեաթ Սեբաստացին, որ Ամիրդովլաթա մեծ բժշկարանին գլուխ մը բանի տուած է, և հետո իր հիշատակարանն կդնէ այսպէս.

Այս ես Պունեաթ Սեբաստացի բժիշկ անուամբ,
Որ ՚ի յարուեստս եմ աշխատեի մեծաւ տենչամբ,

¹ «Բազմավեպ», 1849, էջ 215:

Զձեզ աղաչեմ, ով որ կարդայք սակաւ զայս բան,
Զիս անարժան Հայր մեղայի առնէք արժան»²

Հիշատակարանը Բունիաթ Սեբաստացու վերոհիշյալ բանաստեղծութեան վերջին քառատողն է:

1898 թ. Ղ. Հովնանյանը Վիեննայի Մխիթարյանների գրատնում պահ-վող XVII դ. երկրորդ կեսի մի բժշկարանի մեջ (հեղինակ՝ Գալուստ Ամասիացի)³ գտնում է մի դեղատոմս, որի մասին ասված է. «Այս մուրհամա Պունիաթ բժշկին բանեցուցածն է, եւ ես ինքս փորձեցի եւ տեսայ շնորհքն եւ քանեցուցի, խիստ օգտէ Աստուծով»⁴:

Հետամուտ լինելով այս տեղեկութեանը, Ղ. Հովնանյանը խնդրում է հայկական միջնադարյան բժշկագիտական ձեռագրերի մեծ գիտակ Ղ. Ալիշանին՝ տեղեկութիւններ հաղորդել Բունիաթ Սեբաստացու մասին, սակայն ստանում է հետևյալ պատասխանը. «Պունիաթայ գրուած չկայ առ մեղ»:

Հետագայում ամփոփելով իր ուսումնասիրութիւնները Բունիաթ Սեբաստացու մասին, Ղ. Հովնանյանը գրում է. «Մեր ջանք ու ճիգը լիովին յաջողու-թիւն չունեցավ, սակայն և այնպէս բոլորովին իզուր աշխատանք չենք համարիր: Որովհետեւ ոչ միայն տեսնվեցավ, որ Սեբաստացի բժիշկս եթե ոչ լիա-կատար բժշկարան, գեթ գրավոր երկասիրութիւն մի թողեր է, որ մինչև մօ-տաւոր ժամանակներն այլ և այլ կողմեր պահված մնացեր է, յորմե զանազան մատենագրաց մեջ առնվեր են հիշատակութիւնք և վկայութիւնք իսկ»⁵:

Բունիաթ Սեբաստացու բժշկագիտական ժառանգութեանն անդրադարձել է նաև Վ. Թորգոմյանը: 1899 թ. Կ. Պոլսի Պալատի սուրբ Հրեշտակապետ եկե-ղեցու գրապահոցում նա հայտնաբերում է Ամիրդովլաթի «Օգուտ բժշկութեան» երկասիրութեան մի տարբերակ: Երկասիրութեան հիշատակարաններից մեկի վկայութեամբ՝ այն խմբագրել է Բունիաթ Սեբաստացին. «Այլ և զվերջին աշ-խատօղն սորա զՊունիաթ Սեբաստացի բժիշկն, որ բազում բժշկութիւն կատա-րեցաւ շնորհիւն Աստուծոյ եւ այս պատվական գրոցս խիստ հաւանեցաք եւ գրել տուաք»⁶:

Ի դեպ, Մաշտոցի անվան Մատենադարանի № 414 ձեռագրի հիշատակա-րանը ոչ միայն հաստատում է այդ տեղեկութիւնը, այլև նշում է Բունիաթ Սեբաստացու կողմից «Օգուտ բժշկութեան» գործի խմբագրման ստույգ թվա-կանը. «Այլ և զվերջին զաշխատողն սորա զՊունիաթ Սեբաստացին, որ բա-հում աշխատանք կրեցաք ի յայս արեւստս, և բազում բժշկութիւն կատարեցաւ շնորհիւն Աստուծոյ, և այս պատուական գրոցս խիստ հաւանեցաք և գրել տվաք ձեռամբ Կարապէտ մանկանն, ի թվականութեանս Հայոց Ռձն (1626) ամին և քաղաքն ի Մարզուման»⁷:

² Նույն տեղում, 1881, էջ 34:

³ «Ծուցակ ձեռագրաց Մատենադարանի Հարց Մխիթարեանց ի Վիեննա», Վիեննա, 1895, էջ 1011—1013:

⁴ Ղ. Հովնանյան, Հետազօտութիւնք նախնաց ոսկորների վրայ, Վիեննա, 1897, էջ 489:

⁵ Նույն տեղում, էջ 490:

⁶ «Հանդէս ամսօրեայ», 1899, էջ 109—111:

⁷ Ձեռ. № 414, էջ 221ա:

Վ. Թորգոմյանի վերոնշյալ հոդվածից հետո, մինչև 1913 թ., հայ բանասիրության մեջ Բունիաթ Սեբաստացու կյանքի ու դիտական գործունեության մասին նոր տեղեկություններ, որքան մեզ հայտնի է, չեն արձանագրվել:

1913 թ. Շավարշ Սահակյանը Ծվդոկիայից Վ. Թորգոմյանին նամակով հայտնում է, որ ինքը մի դեղագործից երկու հայերեն ձեռագիր բժշկարան է նվեր ստացել, որոնցից մեկը Ամիրդովլաթի «Օգուտ բժշկութեան» գործն է, իսկ մյուսը՝ Բունիաթ Սեբաստացու «Գիրք բժշկութեան տումարի» բժշկարանը: Գիտակցելով այդ հայտնության կարևորությունը, Վ. Թորգոմյանն իր պատասխանում մասնավորապես գրում է. «Գիտեք, որ ցարդ Բունիաթի մասին ոչ ոք չէր կարողացած տեղեկություններ ստանալ ոչ Ղ. Հովնանյան, ոչ Եսև ոչ ուրիշներ, ուստի Ձեր գտածը հայ բժշկական պատմության ամենաչքնաղ մի էջը պիտի հօրինեմ»:

Այս գրագրության մասին տեղեկություններ ենք քաղում Շ. Սահակյանի «Պունիաթ բժիշկ Սեբաստացի և իր բժշկարանը» հոդվածից: Հոդվածագիրը ոչ միայն նկարագրել է վերոհիշյալ ձեռագիրը, այլև հրատարակել է Բունիաթ Սեբաստացու հեղինակությունը հաստատող վերջինիս շատ կարևոր հիշատակարանը: «Ի թվականութեանս Հայոց ՌՀԹ (1630) ամին ի քաղաքն ի Սամիսոն թարգմանեցաւ սակաւիկ բժշկարանս ի Տաճկաց ի Հայս աշխատութեամբ Բունիաթ բժշկին Սեբաստացույ, ցանկացող էաք արուեստին բժշկութեան, եւ գրեանք շատ էաք ժողովել ի յայլազգաց եւ երրայեցւոց եւ ի Հայոց եւ շատ աշխատանք էաք քաղեր, եւ եկեալ... այրեցին, եւ աւերեցին զՍամիսոն եւ հրայկէզ արարին զգրեանս ամէնայն, և մնացաք անմխիթար: Յետոյ որոնեալ գտաք ի Հայոց և ի Տաճկաց որչափ, որ կարս հասաւ, աշխատեցաք, եւ զայս սակաւ գիրքս ի Տաճկաց ի Հայս թարգմանեցաք, որ կարդայք և ակտիք ի սմանէ միով հայր մեղայիւ արժանի առնէք զիս՝ զՊունիաթ բժիշկն Սեբաստացիս, եւ Աստուած յիշէ զձեզ ի միւս անգամ գալուստն, ամէն»:

Ինչ վերաբերում է հիշատակարանի «եւ զայս սակաւ գիրքս ի Տաճկաց ի Հայս թարգմանեցաք» արտահայտությանը, ապա այն չպետք է Բունիաթ Սեբաստացու ինքնուրույն հեղինակության կասկածի տեղիք տա: Ինչպես հայտնի է, միջնադարում արաբերենն Արևելքում բնագիտության բնագավառում միջազգային լեզու էր: Արաբերեն էին գրում նաև այլազգի քրիստոնյա գիտնականները: Հունարենից, ասորերենից ու եբրայերենից արաբերենի էին թարգմանվում բազմաթիվ գիտական գրվածքներ և եթե մեկը դիցուք կամենար գրել բժշկության մասին, անհրաժեշտաբար պետք է դիմեր արաբալեզու գրականությանը: Բունիաթ Սեբաստացու «Գիրք բժշկութեան տումարի» աշխատությունը չպետք է համարել լոկ թարգմանություն արաբերենից թեկուզ այն պարզ պատճառով, որ հեղինակը ոչ թե մի արաբերեն բժշկարան է վերցրել ու թարգմանել հայերենի, այլ, ինչպես ինքն է նշում, ձեռքի տակ ունեցել է բազմաթիվ հայերեն և օտարալեզու աղբյուրներ և իր իսկ ասելով՝ «որոնեալ գտաք ի Հայոց եւ ի տաճկաց, որչափ որ կարս հասաւ»: Իսկ որ Բունիաթ Սեբաստացին իրոք տիրապետել է մի շարք օտար լեզուների, այդ ապացուցում են հիշատակարանի հետևյալ տողերը. «Եւ գրեանք շատ էաք ժողովել ի յայլազգաց եւ երրայեցւոց եւ ի Հայոց եւ շատ աշխատանք էաք քաղեր»:

8 «Հանդէս ամսօրեայ», 1914, էջ 286:

9 Նույն տեղում, էջ 282:

Հայտնի է նաև, որ հայ բժիշկները տարբեր աղբյուրների համադրութեամբ տեղեւոր իրենց աշխատութիւնները որակելու համար հաճախ էին օգտագործում «Թարգմանող», «Թարգմանեցի» բառերը: Ե՛ւ Մխիթար Հերացին, և՛ Ամիրդովլաթ Ամասիացին, և՛ Գրիգորիս բժիշկը իրենց մեծարժեք աշխատութիւնները կոչել են «Թարգմանութիւն» այդ բառի տակ դնելով «մեկնել», «վերարտադրել», «վերլուծել» իմաստը:

Բունիաթ Սեբաստացու բժշկարանի մասին տեղեկութիւն ենք գտնում նաև Վենետիկի մխիթարյանների մատենադարանի № 1285 ձեռագիր բժշկարանի Վ. Թորգոմյանի նկարագրութեան մեջ¹⁰: Այս ձեռագրի առաջին նյութ-միավորը Գրիգոր Նյուսացու «Յաղագս բնութեան մարդոյն» գործն է, երկրորդը՝ Ամիրդովլաթի «Օգոտ բժշկութեան» երկասիրութիւնը, երրորդը՝ նույն հեղինակի «Ախրապատինը», իսկ չորրորդ մասը (էջ 431—480)՝ Բունիաթ Սեբաստացու «Գիրք բժշկութեան տումարի» աշխատութիւնն է:

Հայերեն բժշկական ձեռագրերի գիտակ Կ. Բասմաջյանը ևս իր ձեռագրական հավաքածոյի մեջ ունենալով Բունիաթ Սեբաստացու այդ բժշկարանի մի ընդօրինակութիւնը՝ ծանոթ է եղել վերջինիս. «Ժէ գարու նշանավոր բժիշկ Պունիաթ Սեբաստացի,— գրել է նա,— 1630-ին Սամսոնի մեջ գրած է ընտիր բժշկարան մը, տակավին անտիպ, որուն մեկ օրինակն իմ հավաքածոյիս մեջ կգտնվի և պիտի հրատարակվի օր մը»¹¹:

Բունիաթ Սեբաստացու բժշկագիտական ժառանգութեան հարցին անդրադարձել է նաև հայ բժշկութեան անվանի պատմաբան Լ. Հովհաննիսյանը: Սակայն ձեռքի տակ չունենալով Բունիաթ Սեբաստացու «Գիրք բժշկութեան տումարի» բժշկարանը, ուստի և ծանոթ չլինելով վերջինիս բովանդակութեանը՝ Լ. Հովհաննիսյանը ենթադրել է, որ Բունիաթ Սեբաստացու բժշկագիտական ժառանգութիւնն արժեքավորվում է թերևս «... ոչ այնքան իր համառոտ շարադրանքով, որքան Ամիրդովլաթի գործի խմբագրութեամբ»¹²: Այսուհանդերձ՝ Բունիաթ Սեբաստացու մասին հայ բանասիրութեանը հայտնի փաստական տվյալներին քաջածանոթ հետադոտողը, ի մի բերելով դրանք՝ Սեբաստացուն գնահատել է որպէս գործունյա բժիշկ, որը «... որոշակի հետք է թողել հայ բժշկագիտական գրականութեան մեջ»¹³:

Մատենադարանի հավաքածոյում ևս կա Բունիաթ Սեբաստացու «Գիրք բժշկութեան տումարի» աշխատութեան մի ընդօրինակութիւն: № 10203 ձեռագիր բժշկարանը հեղինակային հիշատակարան չունենալու, գուցե նաև այլ պատճառով Ձեռագրացուցակում չի նկարագրվել որպէս Բունիաթ Սեբաստացու աշխատասիրութիւն¹⁴: Ձեռագիրը 1963 թ. ձեռք է բերվել անվանի հայագետ Գրիգոր Նալաթյանի ազգականներից: Այն բաղկացած է 90 թերթից և

¹⁰ Երազմավէպ, 1923, էջ 167:

¹¹ Ամիրդովլաթ Ամասիացի, Անգիտաց անպետ, Վիեննա, 1926, էջ 2:

¹² Л. А. Оганесян, История медицины в Армении, ч. III, Ереван, 1946, стр. 123.

¹³ Նույն տեղում:

¹⁴ Հիշատակարանի բացակայութիւնը չի խանգարում հաստատապէս պնդելու, որ այս բժշկարանը իրոք Բունիաթ Սեբաստացու «Գիրք բժշկութեան տումարի» աշխատութիւնն է: Երբ համեմատում ենք № 10203 ձեռագրի գրչական կրճատման Վենետիկի մատենադարանի № 1285 ձեռագրի (ունենք ձեռքի տակ այդ ձեռագրի լուսանկար պատճենը), ինչպէս նաև Շ. Սահակյանի հոդվածի մեջ բերված գլխացանկի հետ, այլևս կասկած չի մնում այս հարցում:

բովանդակում է երկու նյութ. 1) Դեղատոմսեր (էջ 1 ա—57 ա) և 2) Բժշկական—
առն—«Գիրք բժշկութեան տումարի» (էջ 57 ա—90 բ)։

«Գիրք բժշկութեան տումարի» աշխատությունը պարունակում է հետևյալ
զրույթները։

- Ա. (1)—Սարսամն, որ ի տաք է լինի, այն որ դարահանիս կասեն։
Բ. (2)—Սարսամն, որ ի հով է լինի, այն որ նորդիշ կասեն։
Գ. (3)—Տավարն, որ սուտարի ասեն։
Դ. (4)—Սապաթ և սապաթի սահարի։
Ե. (5)—Ճունունին, որ է խելութեններն։
Զ. (6)—Մալխուլիա, որ է խելաց պակասութիւն։
Թ. (7)—Սքթա ինքն ցաւ մի է, որ մարդուն կամ ի նստելտեղն կամ ի
քալելու ժամն զաֆիլ լինի մեծառի պես¹⁵։
Հ. (8)—Դուռն, որ յիշէ դքեապուսն։
Ն. (9)—Դուռն, որ յիշէ զսարան, որ թուրքն ուշուխ ասէ։
Փ. (10)—Հազարն, ցաւ մի է, որ զհաւասն կու պաթլէ։
ՓԱ. (11)—Ըռահշա՝ որ է ձեռացն դողալն։
ՓԲ. (12)—Ֆալիճ, որ հայն կոմնատար ասէ։
ՓԳ. (13)—Լակուան ցաւ մի է, որ երեսն ծռի։
ՓԴ. (14)—Թաշանուշ և հուզազ։
ՓԵ. (15)—Սավտան, որ է սիրո տէրն։
ՓԶ. (16)—Աչաց ցաւութիւն։
ՓԷ. (17)—Ականջ ցաւութիւն։
ՓԸ. (18)—Խաշամ, որ է քթին ցաւիւն։
ՓԹ. (19)—Որոյ քիթն կաթնի և արիւնի, որ տաճիկն ըռույաֆ ասէ։
Ի. (20)—Զիպհան. ինքն կարմիր ուռեցէ։
ԻԱ. (21)—Զուգամ՝ որ է տմաղու։
ԻԲ. (22)—Հազ, որ տաճիկն սուալի խաֆիֆ ասէ։
ԻԳ. (23)—Դուռն, որ յիշէ զաթըլճամն եւ զաթըլըռեան։
ԻԴ. (24)—Դուռն, որ յիշէ զխավաղանն, որ է սրտին դողալն։
ԻԵ. (25)—Ստամոքացաւութիւն, որ ի տաք է լինի կամ ի հով է լինի։
ԻԶ. (26)—Ի սհալն, ազդի ազդի լինի։
ԻԷ. (27)—Խուլինճ։
ԻԸ. (28)—Որոյ նստատեղն ի դուրս գայ, որ տաճիկն խուրուճըլ մախաթ ասէ։
ԻԹ. (29)—Որոյ լերդն ուռի կամ ի տաք է կամ ի հով է։
Լ. (30)—Ֆայժաղնացաւութիւն, որ ուռեց լինի կամ ի սավտայէ լինի։
ԼԱ. (31)—Եարազան՝ որ է դեղնութիւն։
ԼԲ. (32)—Ըսթսխա՝ որ է արծուիքն։
ԼԳ. (33)—Ես ըսթսխա խլահմուն։
ԼԴ. (34)—Դուռն, որ յիշէ զերիկամն եւ զքուշտն։
ԼԵ. (35)—Ի յառնացի անդամն և ի ձուն. ելած ցաւերն ցուցանէ։

¹⁵ է և Ը զրույթները Մաշտոցի անվան Մատենադարանի № 10203 ձեռագրում պակասում են։
Այդ բացը լրացրել ենք Վենետիկի Մատենադարանի № 1285 ձեռագրից, որտեղ գլխացանկը
լրիվ է։

- ԼԶ. (36) — Որոյ յարգանդն խժկի, որ տաճիկն էիթին ըլտամա ասէ՝ որ է դինքն ըխաաւորութիւն:
- ԼԾ. (37) — Զվարճարըլ մաֆասիլն ըրքնիսան և զնքրիսն ցուցանէ վաճարըլ մաֆասիլն՝ ոսկրացանէ:
- ԼԸ. (38) — Ամէն օր բռնած ջերմն, որ համակ լինա, որ տաճիկն հումմայի եաւ միայ ասէ:
- ԼԹ. (39) — Հասապահն և դապարճուխին և ծաղկին և քութէշին ջերմն:
- Խ. (40) — Ուռեց, որ ի յարենէ լինի:
- ԽԱ. (41) — Բոր և քոս՝ որ լինի դալար և չոր:
- ԽԲ. (42) — Տամրակունուն զդեղերն ցուցանէ:
- ԽԳ. (43) — Պահաղնին և զսիկիլն ցուցանէ:
- ԽԴ. (44) — Կոտրածի և վաթածի, և՛ թէ ի միսն զառպարած լինա:
- ԽԵ. (45) — Տալու սալլապ՝ որէ աղուխացան:
- ԽԶ. (46) — Զվնասակար և զմահացու դեղերն ցուցանէ:
- ԽԷ. (47) — Գողութիւն որ է, ուրով ցան, որ տաճիկն ճուտամ ասէ:
- ԽԸ. (48) — Նշան, որ զինչ ցաւ գալոց է, ի մարդն զայն ցուցանէ:
- ԽԹ. (49) — Խոզը, որ է խանազիրն:
- Ս. (50) — Առաջին այն է պատճառն պաւսարին, որ ի սաֆրանուն յաւնալուն լինի, որ այրի և իջնէ ի նստոտեղն:

Այս բժշկարանով Բունիաթ Սեբաստացին ներկայանում է որպէս տեսական ու պրակտիկ որոշակի գիտելիքների տեր գիտնական բժիշկ: Բժշկարանում բերված բազմաթիւ մեջբերումները վկայում են, որ նա ծանոթ է եղել Հիպոկրատի, Գալենի, Դիոգենեսի, Մասեհի, Հոնանի, Իբն Սինայի, Սապիթ Կուրանի և ուրիշ հույն ու արաբ նշանավոր բժիշկների գործերին:

Այսուհանդերձ՝ «Գիրք բժշկութեան տումարի» բժշկարանը հեղինակելիս Բունիաթ Սեբաստացու հիմնական աղբյուրն են եղել Ամիրդովլաթ Մեծ բժշկապետի գործերը, որոնց հասկանալի պատճառով քաջատեղյակ է մեր հեղինակը:

«Գիրք բժշկութեան տումարի» բժշկարանում Բունիաթ Սեբաստացին որոշակի հաջորդականութեամբ կանգ է առել գրեթե բոլոր օրգան-սխտեմների ախտաբանական շեղումների վրա: Սակայն առավել մանրամասն նա անդրադարձել է ներքին հիվանդություններին, նրանց մահճաբուժական պատկերը բնորոշող ախտանիշագիտությանը, հիվանդության ելքի կանխագուշակմանը, ինչպես նաև ապաքինման, խնամքի, դիետայի հարցերին: Էլ ավելի հանգամանորեն նա կանգ է առել ներքոհիշյալ ախտահարումների վրա. նյարդային համակարգի զանազան ախտահարումներ՝ էպիլեպսիա, ապոպլեքսիա, թերլուծանք և լուծանք, մասնավորապես դիմային նյարդի լուծանք, վերջույթների դող (tremor), սպազմներ, աչքի, ականջի, քթի, շնչական ուղիների, սրտի, ստամոքսա-աղիքային տրակտի, լյարդի, փայծաղի, երիկամների և սեռական օրգանների հիվանդություններ: Բժշկարանի վերջին մի քանի գլուխները նըվիրված են առանձին դեղամիջոցների նկարագրությանը և նրանց բուժական հատկություններին:

Յուրաքանչյուր ախտաբանական միավոր նկարագրելիս հեղինակը առաջին հերթին խոսում է տվյալ հիվանդության պատճառների մասին, այնուհետև կանգ է առնում տվյալ հիվանդագին միավորը բնորոշող ախտանիշների նկա-

րագրության և բուժման ձևերի վրա: Հիվանդության պատճառագիտական հարցերը հիմնականում քննվում են ըստ հեղահյուսվածքային ախտաբանության (հոմորալ պաթոլոգիա) ուսմունքի, որը, ինչպես հայտնի է, բժշկագիտության մեջ իշխել է մինչև XIX դ. կեսերը, երբ գերմանացի պաթոլոգ Ռուդոլֆ Վիրխովը տվեց բժշկության մեջ հեղաշրջում առաջացնող իր բնագիտական տեսությունը¹⁶.

Բունիաթ Սեբաստացին բժշկարանի «Սքթա (իմա՝ կաթված)»¹⁷ ինքն ցաւ մի է, որ մարդուն կամ ի նստելտեղն կամ ի քալելու ժամն դաֆիլ լինի մեռածի պես» գլխում գրում է, որ այդ ախտահարումը առաջանում է հանկարծ, երբ սրտից դեպի ուղեղը գնացող երակները լցվում են պիղծ պաղղամով կամ թանձր արյունը հավաքվում է գլխի երակների մեջ և լցվում է ուղեղի փորոքները: Այսպիսի օրինակները բազմաթիվ են բժշկարանում: Սակայն, ի լրումն դրա, հիվանդությունների պատճառագիտության մասին խոսելիս Բունիաթ Սեբաստացին անպայման հատուկ ուշադրություն է դարձնում նաև արտաքին միջավայրի դանազան ազդակների, նախկինում տարած հիվանդությունների և հարևան օրգանների ախտահարումների վրա: Հետևելով Միլթար Հերացու, Գրիգորիսի, Ամիրդովլաթ Ամասիացու առաջադեմ տեսակետներին, նա հիվանդությունների պատճառագիտության և ախտածնության հարցերը մեկնաբանում է որպես բժշկական խոր գիտելիքների տեր բժիշկ: Ահա թե ինչ է գրում նա թոքի ուռուցքի պատճառագիտության մասին. «Պատճառն այն է, որ թոքին գիճուկին շատ լինի կամ ուռեց լինի, կամ զաթլճամէն լինի, կամ նուզլալէ լինի կամ շատ հազալուն, որ հին լինի»¹⁸: Շատ կարևոր է հեղինակի այն միտքը, որ որևէ օրգանի ախտաբանական փոփոխությունները կարող են ազդել հարևան օրգան-սխտեմների վրա և առաջ բերել նորմալ կենսաբանական պրոցեսների շեղումներ: Այս միտքը հատկապես ընդգծվում է բժշկարանի «Դուռն որ յիշէ զսթսխան» և «Դուռն, որ յիշէ զսթսխայի լէհմին» գլուխներում: Ըստ Բունիաթի՝ մարմնի ընդհանուր այտուցվածություն և փորի ջրգողություն առաջանում են լյարդի, ստամոքսի, փայծաղի ախտահարումների և սուր տենդային հիվանդությունների ժամանակ: Բորքոքային պրոցեսի հետևանքով լյարդը կորցնում է իր հիմնական՝ կերակրանյութերի մարսումից ստացված հյութերը արյան վերածելու ֆունկցիան, և այդ նյութերը կուտակվելով որովայնի խոռոչում, առաջացնում են այտուցվածություն. «... Եւ ըսթսխայի լահմուն պատճառն այն է, որ ի կերակրին չէ մարսելուն լինի և այն կերակրին չէ հալիւն, այլ Գ. (Յ) պատճառէ լինի: Ան ի յստամոքն լինի, և Ան ի լերդն, Ան ի տամարին մէջն կու լինի, որ մարսողութեան ուժն կու պակսի, պատճառն այնկից լինի: ... Պատճառ մի այլ, որ ջերման յետև լինի, այն է, որ ի սուր ջերմերուն յետև լինի, որ լերդն վատուժի և զկերակուրն չի կարենա արիւն դարձնել»¹⁹, — գրում է նա:

Այսպիսի օրինակները բազմաթիվ են բժշկարանում: Հետաքրքիր են Բու-

¹⁶ 1858 թ. լույս է տեսնում Ռ. Վիրխովի «Целлюлярная патология как учение, основанное на физиологической и патологической гистологии» աշխատությունը, որ առաջին անգամ տրվում է ախտաբանական պրոցեսի նոր որակի բնութագրում: Այս ուսմունքն իր հիմքում ունի բնագիտական տեսությունը, որի սկզբունքն էր հետևյալ ֆորմուլան՝ omnis cellulae e cellula (յուրաքանչյուր բջիշ բնություն է): БМЭ, М., 1958, стр. 495—499.

¹⁷ Սքթա-արար. ակ. կաթված, լատ. — apoplexia.

¹⁸ Վենետիկի Միլթարյան միաբանության Մատենադարան, ձեռ. № 1285, էջ 432.

¹⁹ Ձեռ. № 10203, էջ 78բ:

նիաթ Սեբաստացու դատողութիւնները դիմային նյարդի ախտահարման մասին: Ըստ նրա՝ դիմային նյարդի լուծանք կարող է առաջանալ հարեան օրդանների պաթոլոգիական փոփոխութիւններից, կոնկրետ՝ դեմքի և գլխի հիվանդութիւնների հետ կապված կարող է վնասվել դիմային ներվը ու ծռել այդ նույն կողմի աչքը և շրթունքը. «Լակուան ցաւ մի է, որ երեսն ծռի և իրենն պատճառն այն է, որ ի գլխին կից նեղ երեսաց ջեղն, զաշին և զպոկներուն և ղճակտին ջղերն կու քաշէ և կու ծռէ»²⁰:

Ի դեպ, կարևոր է նշել, որ Բունիաթ Սեբաստացու ուշադրութիւնից չի վրիպել նյարդային համակարգի և ընդհանրապես մարդու հոգեկան վիճակի կարևոր դերը որպէս հիվանդութիւն առաջացնող ազդակի: Հիվանդութիւնների պատճառագիտութեան հարցերի իր մեկնաբանումներով նա մեզ է ներկայանում որպէս մի բժիշկ, որը հետևելով իրենից առաջ ապրած հայ խոշոր բժշկագետների առաջադեմ տեսակետներին ու հենվելով իր առօրյա բժշկական փորձի եզրահանգումների վրա կարող է դասվել ժամանակի լավագույն բժիշկների շարքը: Իրոք, հիվանդութեան պատճառագիտութեան հարցում աշխատանքի բնույթի վրա ուշադրութիւն դարձնելը շատ կարևոր է. «Եւ տայուն ըլֆիլ կասեն, ցաւ մի կայ, որ ի մարդուն պալտրնին և տամարներն կու լարի ծուռ ծուռ: Այս ցաւս ի համալներն և ի փայեկներն շատ լինի»²¹:

Բունիաթ Սեբաստացու կարծիքով՝ ոտքերի երակների լայնացում առաջանում է բռնակիրների և ջրկիրների մոտ, որոնք երկար ժամանակ կանգնած են լինում²²:

Յուրաքանչյուր ախտաբանական միավոր կարելի է ճանաչել միայն այն դեպքում, եթե բժիշկը ճիշտ և հանգամանորեն է նկարագրում ու թվարկում այդ հիվանդագին միավորը բնորոշող ախտանիշները: Այդ հարցում ևս Բունիաթ Սեբաստացին հանդես է բերում տեսական և փորձնական բժշկական գիտելիքների մեծ իմացութիւն: Բժշկարանի 50 գլուխներից 15-ը նա նվիրել է նյարդային համակարգի զանազան ախտահարումների նկարագրութեանը. (գլխուղեղի թաղանթների բորբոքում, շիզոֆրենիա, մելանխոլիա, կաթված, անդամալուծութիւն): Երկարամյա բժշկական աշխատանքի մեծ փորձը ներառն հնարավորութիւն է տվել լրացնելու նույնիսկ Ամիրդովլաթ Ամասիացուն: Այդ է հաստատում մասնավորապես «Սարսամ» կոչվող հիվանդութեան Ամիրդովլաթի և Բունիաթ Սեբաստացու նշած ախտանիշների համեմատութիւնը:

ԱՄԻՐԴՈՎԼԱԹ ԱՄԱՍԻԱՅԻ

Օգուտ բժշկութեան, Երևան, 1940

Գլ. լե. Սարսամ որ ինքն ըղէղին ցաւերուն է, ի տաքէն եւ ի հովէ լինայ:

ԲՈՒՆԻԱԹ ՍԵԲԱՍՏԱՅԻ

Ձեռ. № 10203

Դուռն Ա. Սարսամն որ ի տաքէ լինի, այն է, որ զարաեանիս կասեն, որ ի հովէ լինի, այն, որ նորդիշ ասեն:

²⁰ Նույն տեղում, էջ 63ր:

²¹ Նույն տեղում, էջ 81ր:

²² Ուշագրավ են այս նույն հարցի մասին Գրիգորիսի մտքերը. «Եւ այս նեղս (խոսքը ոտքերի երակների լայնացման մասին է) ի յաշխատաւոր մարդիքըն շատ լինի, դերդ, որ համառն է և կամ շիրիկն, և ամեն րան, որ աշխատանք է և յուրն կենալ, զերդ հողագործ և այլ, որ ինուսին նման են: Եւ այս նեղոյս նշանն այս է, որ հաստնայ և փոթի գիրօք, և գոյնն լինի մքգոյն՝ ընդ կանան: և ընդ սկ ի մէջ» (Գրիգորիս, Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւօց, աշխ. Ա. Կ ժ ո յ ա ն ի, Երևան, 1962, էջ 44):

... նշան որ ի տաքէ լինայ այն է, որ յարենէ լինայ՝ հանապազ աչքն և երեսն կարմիր և երակն ի լի: Եւ՝ այն որ ի սափրայէ՝ երեսն դեղին լինայ:

... նշան որ ի հովէ լինայ այն է, որ ի պալղամէ՝ նա քուն չի լինայ և զինչ որ տեսնու վախենաւ և ձրի զրուցէ և ի ժիր ի յոտվին հայի և ավազնայ և թե քուն լինի՝ պեղծ երազ տեսնու (էջ 143—144):

... Այն որ սափի սափրայէ նշանն այն է, որ տաք ջերմն կու բռնէ, քուն սակաւ, ընդ վայր կու զրուցէ բերանն լեղի և չոր, լեզուն դեղին և ճեղքի:

... Եւ այն, որ արին հետ սափրային խառն լինի, նշանն այն է, որ երեսն կարմիր լինի, շլշեց և բազկին երակն ի լի լինի, ջերմն համակ լինայ, ղլոյսն շուզենայ և ի ճրագէն վախենա, աչիչ արցունքըն դա, դուխըն ծանր լինի, արեցաթուն ընդ վայր զրուցէ, բերանն պար ունենայ, լեզուն ծանր լինի:

... Այն, որ ի սավտայէ է, նշանն այն է, որ արեն ցաթէ ընդ վայր զրուցէ ու վախէ ու լայ և չքանայ և խելք շունենայ: Քիթն չոր լինի, գլուխն թեթեւ լինի և ջերմ ունենա:

... Այն սարսամն, որ ի պալղամէ լինի, նշանն այն է, որ ի ժիր մոռացկոտ լինի, գիտենան թե քուն է, ապա արթուն է, չի քնանար, ծանտբանայ, դեմն ջերմն բռնէ, լեզուն ճերմակ, երակն յուլ, խելքն ցրիւ և խօսք չի հասկնա (էջ 57ա—57բ):

Ինչպես տեսնում ենք, Բունիաթ Սեբաստացին առավել մանրամասն է փվարկել գլխուղեղի թաղանթների բորբոքման բոլոր ախտանիշները:

Բժշկարանի զգալի մասը հատկացված է վերին շնչուղիների ախտահարումների նկարագրությանը: Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում այս բաժնի «Զիպհան ինքն կարմիր ուռեցէ» գլուխը: «Զիպհան» պարսկերեն բառ է, որ նշանակում է կոկորդի խեղդամահ անող հիվանդություն, երբ ճնշվում, սեղմվում է շնչափողը և խանգարվում է նորմալ, դիֆթիկ շնչական ակտը: Դրա պատճառները տարբեր են. ուռուցքներ, խոցային անգինա, դիֆթերիա և վերջապես, երբ օտար մարմին է ընկնում շնչափողը: «Զիպհան ինքն կարմիր ուռեց է Բ (2) դին, խնախն ի մէկ դին լինի, զիպհանն պողողին Բ (2) դին: Կարմիր ուռեց լինի, որ զպողողին դժ (2) դին ուռեցնէ ի դուրսէն: Խնախն այն է, որ ի պողողին մէջն ուռեց մի լինի, ժամ լինի, որ խռակն բռնվի, բերանն ի բաց մնայ, կերակուր ի վայր չերթա: Ժամ լինի, որ խմած ջուրն ի քթէն դա և լեզուն ուռի»²³:

Կանգ առնենք վերոհիշյալ հիվանդության ժամանակ Բունիաթի առաջարկած բուժման ձևերից մեկի վրա: Երբ բուժման մյուս ձևերը չեն թեթևաց-

23 Ձեռ. № 10203, էջ 69ա:

նում վիճակը և հիվանդը սկսում է խեղդամահ լինել նա առաջարկում է վիրաբուժական փոքրիկ միջամտություն: Սա՝ շտապ բուժական օգնության մի ձև է, որն այժմ էլ լայն կիրառություն ունի բժշկության մեջ և կոչվում է tracheotomia: Արտաքինից, որոշակի հատվածի վրա ծակվում է շնչափողը, որպեսզի հիվանդը խեղդամահ չլինի, հետո միայն ցույց է տրվում համապատասխան բուժական օգնություն: Ե՛ն թէ՛ զուռեցն ճղքես և ողջանա սիսուան ջուր տուր և թէ՛ այսպիսով շոգջանա մեռնի, լաւն այն է, որ ի խոշակին ներքեւն և վիզն չփոքր ծակես, զայս այն չաղն արա, որ հիւանդն դիժարանա ու ճար չի լինա՝ յետո մորհամ ստածէ՛ք²⁴:

Բժշկարանում զգալի տեղ է հատկացված աղի-ստամոքսային տրակտի ախտաբանական փոփոխություններին: Ե՛րուոն որ յիշէ զստամոքին ցաւերն՝ գլխում նկարագրվում են ստամոքսի սուր և խրոնիկական բորբոքումները՝ ցավեր, որոնք կարող են լինել և քաղցած ժամանակ և ուտելուց անմիջապէս հետո, ծանրութեան զգացում ստամոքսի շրջանում, ախորժակի կորուստ, բերանում դառնութեան զգացում, զկռտոցներ, սրտախառնոց, փսխում, շոշափելիս ստամոքսային հատվածում զգացվում է ուռածություն:

Ուշագրավ է, որ ժամանակակից մահճաբուժությունը ճիշտ նույն ախտանշաններով է նկարագրում ստամոքսի խրոնիկական բորբոքումը: Անվաճից հետևում է, որ Բունիաթ Սեբաստացին լինելով փորձառու մահճաբույժ՝ կարողացել է ճիշտ ըմբռնել զանազան ախտահարումների ներքին էությունը և պարզել դրանց առաջացման պատճառները:

Յուրաքանչյուր բժշկարանի արժեքը մեծ չափով պայմանավորված է նաև նրանով, թե հեղինակը հիվանդի քննության, հիվանդությունների ախտորոշման համար ինչպիսի միջոցներ է առաջարկում, որով միայն կարելի է պատկերացում կազմել տվյալ բժշկի տեսական և փորձնական պատրաստվածության մասին: Բունիաթ Սեբաստացին օգտվել է հիվանդին աչքով զննելու (inspectio), շոշափման (palpatio), բախման (percusio), ականջով լսելու (auscultatio) մեթոդներից: Նա մեծ ուշադրություն է դարձրել հիվանդի մաշկի գույնին, շնչառության և զարկերակի հաճախականությանը, այտուցներին, երակների վարիկոզ լայնացումներին և այլն: Բունիաթ Սեբաստացին հիվանդությունն ախտորոշելիս կարևոր նշանակություն է տվել նաև հիվանդի խուլի, թարախի, մեզի, կղկղանքի գույնին, հոտին, ձեւին և տեսանելի այլ հատկություններին: Ախտորոշման նպատակով նրա կիրառած մի շարք միջոցներ այժմ էլ օգտագործվում են բժշկագիտության մեջ: Մասնավորապէս դիմային նյարդի թերլուծանքի ախտորոշման համար նրա առաջարկած մեթոդն այժմ էլ լայն կիրառություն ունի նյարդաբուժության մեջ: Ենշան, որ ի շորութենէ լինի այն է, որ հանապազ բերանն չորանայ և ճակատն քաշուի և բարկնա, և թէ շունչ առնէ՝ քամին ի յայն դիհէն գայ, որ վատուծել է և ցաւն է՛ք²⁵: Փշելու ախտորոշման այս մեթոդի միջոցով հայտնի է դառնում դիմային նյարդի անգամ ամենաթեթև ախտահարումը: Հիվանդը չի կարողանում շրթունքները հավաքած պահել և ուղիղ փշել, փշում է մի կողմի վրա:

Հիվանդությունների ախտորոշման նպատակով, բացի զննելուց ու շոշափելուց, Բունիաթ բժիշկը անմիջականորեն ունկնդրել է հիվանդին և կատա-

²⁴ Նույն տեղում, էջ 69բ:

²⁵ Նույն տեղում, էջ 64ա:

րել է նաև ընդբախման գործողություն: Հայկական բժշկական ձեռագրերում վկայություն կա այն մասին, որ ընդբախումը կատարել են փորի խոռոչի վրա և ստացել են «դարդաբայի» ձայն: Ըստ ակադ. Լ. Հովհաննիսյանի՝ վերջինս նշանակում է տիմպանիկ հնչյուն²⁶: Փորի խոռոչի օրգանների հիվանդություններն ախտորոշելիս Բունիաթ Սեբաստացին օգտվել է ախտորոշման այս ձևից. «Այն որ տապիլի ասեն, նշանն այն է, որ լուր փորն կուռի, երբ ձեռալքտ դարնէս ի վրան՝ տաւուլի պէս ձայն հանէ»²⁷:

«Գիրք բժշկութեան տումարի» աշխատության հեղինակը շատ բազմակողմանի և մանրամասն է մշակել տարբեր հիվանդությունների բուժման հարցերը: Ինչպես հայտնի է, միջնադարում առանձնահատուկ ուշադրություն է նվիրվել դեղագիտությանը: Հայտնի է, նաև, որ միջնադարյան դեղագիտությունն իր զարգացման գագաթնակետին հասավ արաբական բժշկագիտության մեջ: Գրվեցին բազմաթիվ ծավալուն դեղագրքեր՝ ախրաբադիներ, որոնց մեջ մանրամասն նկարագրվում էին բուժիչ միջոցները, նրանց պատրաստման ձևերը, ցուցումները և հակացուցումները: Հայ բժշկները ևս, օգտվելով արաբական աղբյուրներից, գրեցին ծավալուն դեղագրքեր, որոնք հարստացվեցին Հայաստանի բուժիչ բույսերից ստացվող դեղամիջոցների նկարագրություններով²⁸:

Հիվանդությունների բուժման հարցերը շարադրելիս Բունիաթ Սեբաստացին առաջնորդվել է ախտանիշագիտական սկզբունքով, հիմք ընդունելով հիպոկրատյան հայտնի (contrario-contraris) դրույթը. «Եւ ամէն ցաւու հակառակովն արա զըստածումն, շատ օգտէ»: Բավական բարդ են նրա առաջարկած դեղատոմսերը: Դրանք պարունակում են ջերմություն իջեցնող, սըրտային, խոխաբեր, ցավազրկող, դժվարացած շնչառությունը թեթևացնող և այլ բազմաթիվ դեղամիջոցներ: Տարբեր տեսակի դեղամիջոցների զուգորդումներից նա ստանում է մատուցիչներ, մաճուններ, դուրսեր, շարապներ և այլն: Բունիաթ Սեբաստացին քաջածանոթ լինելով միջնադարյան դեղագիտության նվաճումներին, յուրաքանչյուր ախտահարման բուժման ձևերի մասին խոսելիս մեջբերումներ է անում բժշկագիտության մի շարք դասական հեղինակների (Հիպոկրատ, Դիոսկորիդես, Գալեն, Իբն-Մասուա, Իբն-Սինա, Ռազես, Իբն-Բեյտար, Ամիրդովլաթ) առաջարկած բուժիչ միջոցներից: Բայց ի հավելումն սրանց, նա հաճախ առաջարկում է բուժման սեփական միջոցները, նույնիսկ լրացում անում Ամիրդովլաթի «Անգիտաց անպէտի», իր ժամանակի համար հանրագիտարանային դեղաբառարանի մեջ: Ըստ Բունիաթ Սեբաստացու ողղակի վկայության՝ «Անգիտաց անպէտի» 2607 թվահամարը կրող դեղամիջոցը իր ավելացրածն է: Դեղամիջոցը կոչվում է «Զաւիի Զինի»: Այն բույսի արմատ է և օգտագործվում է syphilis հիվանդության ժամանակ, Տեղեկություններ հայտնելով այս դեղամիջոցի մասին, Բունիաթը այնուհետև

26 Л. А. Оганесян, История медицины в Армении, ч. II, Ереван, 1946, стр. 120.

27 Զեռ. № 10203, էջ 78բ.

28 Այդ առումով ավելորդ չէ հիշատակել հայկական բազմազան դեղաբույսերի մասին անտիկ խոշոր բժիշկ-բուսաբան Դիոսկորիդեսի վկայությունը: Վերջինս I դ. 70-ական թվականների հուլյն խոշոր բժիշկ-բուսաբան է, գրել է մի ծավալուն դեղագիրք (De meietra medica), որտեղ նկարագրված են բուսական, կենդանական, հանքային ծագման բուժիչ միջոցներ, որոնցից մոտ 600-ը բուսական ծագման են և դասակարգված են ըստ մորֆոլոգիական հատկությունների: (Л. Меньс, История медицины, М., 1926, стр. 46).

մանրամասն շարադրում է պատրաստման և օգտագործման ձևը. «Չաւփի Չինի (Squine) ինքն տակ մըն է, որ ի Չինիմաշինու կուգայ, ի մաւտ ժամանակիս է սա՛մանած, ֆոանկին իմաստունքն, յառաջին իմաստունքն չեն գիտեր. վասն այն ի յառաջի գրեանքն չէ գրած, աստուածապարգեւ դեղ է, որքան զայս այլ աղէկ չի լինար ֆոանկին ցաւուն (syphilis): Թէ խոցն նոր լինայ եւ թէ հին՝ կու բժշկէ Բձիւ. (240) դրամ եփես եւ տաս խմէն վաղուրնէ Ժ. Ժ. (10—10) դրամ անաթուց, ի տաք տեղ, որ քրտնի, կու խալսի ի ցաւէն. եւ ի փոխանն սափարինոսն է, և այլ բազում օգտութիւն կայ ի նմա, զոր ոչ գրեցաք: Զայս անարժան Պունիաթս գրեցի»²⁹:

Բազմաթիւ են Բունիաթ Սեբաստացու առաջարկած դեղամիջոցները նաև Ամիրդովլաթի «Օգուտ բժշկութեան» երկասիրության իր խմբագրած օրինակում:

Բունիաթ Սեբաստացու «Գիրք բժշկութեան տումարի» աշխատութիւնը, ինչպես նաև Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» աշխատության նրա խմբագրումը գալիս են ասելու, որ ի դեմս Բունիաթ Սեբաստացու հայ բժշկագիտութիւնը XVII դ. առաջին կեսին ունեցած տեսական և փորձնական մեծ գիտելիքներով օժտված մի բժշկապետ, որն անպայման իր արժանի տեղն ունի հայ բժշկագիտության պատմության մեջ:

ТРУД БУНИАТА СЕБАСТАЦИ «КНИГА О МЕДИЦИНЕ»

Д. М. КАРАПЕТЯН

Резюме

Труд Буниата Себастаци «Книга о медицине» до сих пор не был известен широкому кругу специалистов. Основными первоисточниками для Себастаци послужили произведения классиков античной и средневековой медицины (Гиппократ, Гален, Диогенес, Ибн-Сины, Разеса и др.), однако наиболее полно использованы им произведения выдающегося армянского средневекового врача Амирдовлата.

Для исследования труда Буниата Себастаци использованы два рукописных «Лечебника» — один из собрания Матенадарана (рук. № 10203), другой (в фотокопиях) — из библиотеки конгрегации армянских мхитаристов в Вене (рук. № 1285).

«Книга о медицине» Буниата Себастаци состоит из 50-ти глав. В ней приведены в определенной последовательности патология и терапия ряда болезней. Некоторые главы посвящены описанию лекарственных веществ и их свойств.

²⁹ Ամիրդովլաթ Ամասիացի, Անգիտաց անպետ, ի լոյս էած Կ. Յ. Բաւմաշեան, Վիեննա, էջ 442: